ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

«02» 08 2023թ № 1389-Ա

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N301-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N120-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N272-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ում ե մ.

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման պատասխանատու անձ նշանակել Էկոնոմիկայի նախարարության

զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Լիլիթ Հարությունյանին:

2. Զբոսաշրջության կոմիտեի նախագահին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում նշանակել ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման պատասխանատու անձ:

3. Էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի մայիսի 7-ի «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումներին ընթացք տալու համար լիազոր անձ և պատասխանատու ստորաբաժանում սահմանելու, ինչպես նաև հաղորդումների հաշվառման ձևակերպման և ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը հաստատելու մասին» N301-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի հունիսի 19-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակելու, ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը հաստատելու մասին» N120-Ա հրամանները:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

8/2/2023

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «_07_»____08_____2023թ №_16-Ա___

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N272-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունիսի 11-ի N404-Լ հրամանով հաստատված հավելվածի 23-րդ կետի 15-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի օգոստոսի 2-ի N 1389-Ա հրամանի 2-րդ կետը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման պատասխանատու անձ նշանակել էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար Շաքե Հովսեփյանին:

2. Էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքէջում:

ՍԻՍԻԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ